**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**
**«ԵՔ-ԲՄԱԾՁԲ-20/47» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի**

Նիստի անցկացման՝
-վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.
-օրը՝ 28 փետրվարի 2020թ.
-ժամը՝ 10:10

| | |
|---|---|
| Մասնակցում էին | |
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Մելիքսեթյան /ԳԱՊ/ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Վ. Աղաբեկյան /գնահատող/, Մ. Մալխասյան /գնահատող/, Հ. Հակոբյան /բացող/, Վ. Մելիտոսյան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ս. Եղիազարյան |

**1. Բաց մրցույթի հրավերում փոփոխություն կատարելու մասին**

(Ա. Մելիքսեթյան)

1.1 «ԵՔ-ԲՄԱԾՁԲ-20/47» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել հրավերով սահմանված չափաբաժինների անվանումներում և տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում կատարել համապատասխան փոփոխություններ, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, որոշեց հրավերում կատարել համապատասխան փոփոխություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Գնման առարկայի չափաբաժինների փոփոխված անվանումները

| *Չափաբաժինների համարները* | ***Չափաբաժնի անվանումը*** |
|---|---|
| 1 | **Մաշտոցի 43** բակային տարածքների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ |
| 2 | **Մաշտոցի 51** բակային տարածքների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ |
| 3 | **Ե.Քոչար 23** բակային տարածքների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Գնման առարկայի փոփոխված տեխնիկական բնութագիրը.

| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | Չ/Մ | միավոր գինը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | կատարման հասցեն | կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 71241200 | **Տեխնիկական առաջադրանք**<br><br>1. Եզրաքարերի նորոգում, կամ նորերի տեղադրում<br>2.Սալահատիկի իրականացում<br>3. Լուսավորություն<br>4. Նստարանների նորոգում կամ տեղադրում<br>5.Աղբամանների նորոգում կամ տեղադրում<br>6.. Զրուցատաղավարերի նորոգում կամ տեղադրում<br>7. Սիզամարգերի վերականգնում<br>8. Ցանկապատի նորոգում<br>9. Մետաղական ճաղաշարի իրականացում<br>10. Խաղասարքերի տեղադրում<br>11. Շին հրապարակի սահմանազատում<br>12. Ոռոգման համակարգի վերանորոգում կամ տեղադրում<br><br>Նախագծային առաջադրանք<br>• Նախագիծը ներկայացնել 7/յոթ/ օրինակից պատճենահանված ալբոմի տեսքով<br>• Նախագիծը ներկայացնել էլեկտրոնային կրիչով և AUTOCAD ծրագրով<br>• Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաները, տեխնիկական միջոցները, աշխատանքային ռեսուրսները և մասնագիտական որակավորումները<br>• Ներկայացնել նախագծի առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները<br>• Ներկայացնել մանրամասնորեն կատարված<br><br>ուսումնասիրությունների արդյունքում | դրամ | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հիմնավորված աշխատանքային ծավալներ<br>• Նախագիծը մշակել գործող նորմերին և կանոններին համապատասխան<br>• Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի հետ<br>.Նախագիծը ներկայացնել հայերեն և ռուսերեն տարբերակներով: | | | | | | |
| 1 | 71241200/36 | **Մաշտոցի 43** բակային տարածքների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ | դրամ | | | 1 | Տերյան 44 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 45-րդ օրացուցային օրը ներառյալ |
| 2 | 71241200/37 | **Մաշտոցի 51** բակային տարածքների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ | դրամ | | | 1 | Տերյան 44 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 45-րդ օրացուցային օրը ներառյալ |
| 3 | 71241200/38 | **Ե.Քոչար 23** բակային տարածքների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ | դրամ | | | 1 | Տերյան 44 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 45-րդ օրացուցային օրը ներառյալ |

## 2. Բաց մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Ա. Մելիքսեթյան)

**Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.**

1. Գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.
2. Բաց մրցույթի հրավերի փոփոխված տեքստը հաստատելու մասին.
3 Բաց մրցույթի հայտարարության փոփոխված տեքստը հաստատելու մասին.
4. Բաց մրցույթի հայտարարության և հրավերի ռուսերեն լեզվով տեքստը հաստատելու մասին.
5.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

### 3. Բաց մրցույթի փոփոխված (հայերենով) և ռուսերենով հրավերների տեքստերը հաստատելու մասին

(Ա. Մելիքսեթյան)

Հանձնաժողովը որոշեց՝ հաստատել փոփոխված (հայերենով) և ռուսերենով հրավերների տեքստերը

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

### 4. Բաց մրցույթի փոփոխված (հայերենով) և ռուսերենով հրավերների տեքստերը հաստատելու մասին

(Ա. Մելիքսեթյան)

Հանձնաժողովը որոշեց՝ հաստատել փոփոխված (հայերենով) և ռուսերենով հայտարարությունների տեքստերը
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

### 5. Բաց մրցույթի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Մելիքսեթյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հայտերի բացման նպատակով հանձնաժողովի նիստ հարավիրել ս.թ. ապրիլի 9-ին, ժամը 11:00-ին, ք. Երևան, Արգիշտի փողոց 1 հասցեում՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի 321 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.**

Հանձնաժողովի

Նախագահ՝ ............................ Ա. Մելիքսեթյան

Անդամներ՝ ............................ Վ. Աղաբեկյան

............................ Մ. Մալխասյան

............................ Հ. Հակոբյան

............................ Վ. Միլիտոսյան

Քարտուղար՝ ............................ Ս. Եղիազարյան